ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2023թ. **N---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ. 69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևան քաղաքի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

«--------» ---------- 2023թ.

N ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2022թվականի տարեկան զուտ շահույթ	Շահութաբաժնի հաշվարկման բազա (ըստ առաջարկութ-յունների)	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Միասնական բազմանպատակային հիմնադրամ	Վնասների նվազեցում
1	«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ	1033849.0	274609.0	109844		314297.0	609708.0
2	«Երևան» ԲԿ ՓԲԸ	156966.0	178464.0	71385.6		85580.4	
3	«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	2582.0	2582.0	1032.8		1549.2	
4	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	202.0	1064.5	0.0			202.0
5	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	-6461.0	652.0	260.8			
6	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	7181.4	7181.4	2872.6		4308.8	
7	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	491.2	491.2	196.5		294.7	
8	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	1873.0	2008.0	803.2		1069.8	
9	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	2762.0	2762.0	1104.8		1657.2	
10	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	415.8	415.8	166.3		249.5	
11	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	4998.3	4998.3	1999.3	2000.0	999.0	
12	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	51.4	52.2	20.9			30.5
13	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	31.0	80.0	32.0			
14	«Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ	-5347.8	6852.2	2740.9			
15	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	72314.3	72314.3	28925.7	15344.7	11388.6	16655.3
16	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	30664.0	30664.0	12265.6		16354.4	2044.0
17	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	2120.1	2120.1	0.0			2120.1
18	«Երքաղլույս» ՓԲԸ	200496.0	200496.0	80198.4		120297.6	
19	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	35719.0	35730.6	14292.2		21426.8	
20	«Ձևավորում» ՓԲԸ	-200.2	684.2	273.7			
21	«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	3782.9	105111.0	0.0			3782.9
22	«Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ	2699.4	2722.4	1089.0			1610.4
23	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	170.8	170.8	68.3		102.5	
24	«Անխափան վերելակ» ՓԲԸ	5.0	5.0	2.0		3.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1547365.6**	**932231.0**	**329574.6**	**17344.7**	**579578.5**	**636153.2**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2022 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու՝ 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման (խմբագրված 23.12.2020թ. հ.312-Ա որոշմամբ) կատարմամբ (այսուհետ՝ Որոշում):

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների՝ 2022 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևան քաղաքի բյուջե վճարվելիք տարեկան շահութաբաժնի հաշվարկման բազաները և վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքները, զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 39 ընկերություններից 2022 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 24 ընկերություն (որից 3 հանձնված են հավատարմագրային կառավարման), որոնց զուտ շահույթը կազմել է 1,665,222.8 հազ. դրամ, իսկ առանց հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների՝ 1,559,374.6 հազ. դրամ:

Շահութաբաժին վճարող հանդիսացող ընկերությունները թվով 21-ն են, քանի որ «Քաղաքաշինություն», «Թիվ 4 պոլիկլինիկա» և «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ների (այսուհետ՝ շահութաբաժին չվճարող ընկերություններ) գծով շահութաբաժին չի հաշվարկվում, որովհետև քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի հիմքով առկա են շահութաբաժնի վճարման սահմանափակումներ (զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով): Միաժամանակ, «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) զուտ շահույթը կազմել է 1,033,849.0 հազ.դրամ,

սակայն շահութաբաժնի հաշվարկման բազա է ընդունվել Ընկերության կողմից ներկայացված, աշխատակազմի առողջապահության վարչության հետ համաձայնեցված առաջարկը, այն է՝ 274,609.0 հազ.դրամը (զուտ շահույթից նվազեցվել է արտարժույթի փոխարժեքային տարբերությունից առաջացած հաշվեգրված 759,240.0 հազ.դրամի եկամուտը, որը չի ենթադրում դրամական միջոցների ներհոսք):

Արդյունքում, հաշվի առնելով վերոգրյալը՝ շահութաբաժնի հաշվարկման բազան 932,231.0 հազ.դրամի փոխարեն կազմել է 823,935.4 հազ.դրամ (նվազեցվել է շահութաբաժին չվճարող ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման բազան՝ 932,231.0 հազ.դրամ - 1,064.5 հազ.դրամ - 2,120.0 հազ.դրամ - 105,111.0 հազ.դրամ), որից վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կկազմի 329,574.6 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2022 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2022 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ